պատասխանում էր ոչ թէ պետական շահերը պաշտպանելու, այլ իր ունկնդիրներին ծիծաղեցնելու համար։ Վերջը իշխան Բիսմարկ յայտնեց, որ նա մտադիր է մայրաքաղաքը Բեռլինից մի այլ տեղ տեղափոխել, որովհետև կառավարութիւնը, բարձր վարչութիւնը և օրէնսդրական ժողովը ապահով չեն կարող լինել միլիօնաւոր ազգաբնակութիւն ունեցող մի մեծ քաղաքի մէջ, իսկ օրէնսդրական ժողովը չէ կարող ժողովրդի ներկայացուցիչ լինել, քանի որ նրան մասնակցում են չափից դուրս շատ բեռլինցիներ։ Ես միշտ մի տեսակ նմանութիւն եմ նշմարել իշխան Բիսմարկի և մեր պահպանողականների ներքին քաղաքականութեան մէջ։ Այդ նմանութիւնը կը գտնի իւրաքանչիւր մարդ, որին պատահել է կարդալ իշխան Բիսմարկի օրգանները և մեր „Московск. Вѣд.“ և „Русь“ լրագիրները։ Այդ լրագիրները մինչ այն աստիճան միմեանց նման են և միատեսակ դատողութիւններ են տալիս ներքին հարցերի և „ժողովրդական ոգու“ մասին, որ կարծես երկուորեակ եղբայրների օրգաններ լինեն։ Բայց ոչ ոք չէր սպասում, որ Գերմանիայի կանցլերը կը սկսի այդպիսի հրապարակախօսների լեզուով խօսել։ Այնպէս է, որ սպառնալով Բեռլինին զրկել այն շահերից, որոնք կապված են բարձր կառավարութեան այդ քաղաքի մէջ մնալու հետ, Բիսմարկ կամենում է ստիպել բեռլինցիներին ռայխստագի համար կառավարութեան կուսակիցներին ընտրել և ոչ թէ ընդդիմադիր առաջադէմներին, ինչպէս լինում էր մինչև այժմ։

Մինչդեռ տօների ժամանակ իշխան Բիսմարկ վերականգնում էր իր առողջութիւնը, նրա գործակից Պուտկամեր և Մայբախ մինիստրներն էլ իրանց գործն էին կատարում։ Ցանկանալով հետևել իրանց առաջնորդի օրինակին, նրանք սկսեցին հալածել մամուլը։ Հասարակական աշխատանքների մինիստր Մայբախ հրամայեց իր ստորադրեալներին, որ պետական յայտարարութիւնները միայն այն լրագիրներին տրվին, որոնք կառավարութեանը բարեկամաբար են վերաբերվում։ Եթէ նրանցից մէկը այդպիսի յայտարարութիւնը ընդդիմադրական լրագրի մէջ տպի, յայտարարութեան գինը նրա ռոճիկից պէտք է վճարցնել։

Պուտկամեր, ներքին գործերի մինիստր լինելով, աւելի միջոց ունի վնասել Բիսմարկի հակառակ լրագիրներին։ Սօցիալիստների դէմ հրատարակված օրէնքով զինուորված, նա կարող է ոչ թէ միայն դրամական տուգանքներ առնել, այլ և բոլորովին դադարեցնել ցանկացած լրագիրը։ «Ինստերբուրգի Լրագրի», „Բօրսային սուրհանդակի“ և „Բեռլինի Օրագրի“ համարները կալանաւորված են 1½ շաբաթվայ ընթացքում։ Վերջին լրագիրը պատժված է անբարոյականութեան համար և այդ անբարոյականութիւնը նրա մէջն է, որ նա տպել է Շպիլհագենի „Հրեշտակ“ ռօմանը։ Օտարոտի երևոյթ է, որ գերմանացի աստիճանաւորները մեղադրում են Շպիլհագենին անբարոյականութեան մէջ։ Ճշմարտութիւնը հասկանալի դարձնելու համար, պէտք է նկատել, որ այդ լրագիրը հակասեմիտների թշնամի է և դատապարտում է նրանց ցոյցերը։ „Բօրսային Սուրհանդակը“ պատժվեցաւ Ռօշֆօրի մի քանի յօդուածները արտատպելու համար, թէպէտ լրագիրը դատապարտում էր այդ յօդուածների մէջ յայտնած մտքերը։ Բայց պէտք է նկատել, որ այդ լրագիրը աւելի մեծ թշնամի է հակասեմիտների և պօլիցիական ճարպիկութեամբ յայտնում է նրանց գործած անկարգութիւնները։

Հակասեմիտները վայելում են Բիսմարկի հովանաւորութիւնը, որովհետև „նրանք կառավարութեան բարեկամ կուսակցութիւն են կազմում“ և որովհետև նրանց հրապարակախօսները չափազանց գովում են իշխանի անգնահատելի արժանաւորութիւնները։ Միևնոյն ժամանակ սօցիալիստների դէմ հրատարակած օրէնքը չափազանց յարմար է և ներքին գործերի մինիստրը օգուտ է քաղում նրանից, վնասելով Բիսմարկի հակառակորդներին։ Այդ օրէնքը ուղղված է սօցիալիստների դէմ։ Այդպէս էր հասկանում նրան օրէնսդրական ժողովը և նախկին մինիստր Էյլենբուրգ, բայց այս վերջինը անկախ մինիստր էր և այդ պատճառով ստիպված էր հեռանալ։ Օրէնքի մէջ մութ կէտեր կան, որոնց վրա ռայխստագի անդամները իր ժամանակին ուշադրութիւն դարձրին, բայց այն ժամանակ ասում էին, որ պէտք է հաւատ ունենալ դէպի կառավարութիւնը և ռայխստագը համաձայնեց։ Այժմ ներքին գործերի մինիստրը ի չարն է գործ դնում այդ հաւատարմութիւնը օգուտ քաղելով օրէնքի մութ կէտերից և հալածելով Բիսմարկի հակառակորդներին։

ԱՆԳԼԻԱ

Լրագիրները հաղորդում են, որ կալուածական խնդիրը Անգլիայի մէջ աւելի գործնական ձև է ստանում, առիթ տալով օրէնսդրական առանձին փոփոխութիւնների և խոստանալով ապագայում բարելաւել երկրագործների դրութիւնը, որոնք այժմ արդիւնաբերական և կալուածատէր արիստոկրատիայից կատարելապէս ճնշված են։ Նորերումս համայնքների ժողովի մէջ քննվում էին կալուածատէրերի զեղծումները և նրանց առաւելութիւնները երկրագործ ազգաբնակութեան վերաբերութեամբ։ Այդ հարցը բարձրացրեց համայնքների ժողովի անդամ Բլեններգասսետ։ Կալուածատէրերը իրաւունք ունեն երկրագործի չը հատուցած տարեկան տուրքը ապահովել նրա ցանած հացով։ Այդ հացից երկրագործի միւս պարտատէրերը չեն կարող օգուտ քաղել և բաժին ստանալ։ Որովհետև հանգամանքները և աղքատութիւնը ստիպում են երկրագործին ամբողջութեամբ չը վճարել կալուածական տուրքը, կալուածատէրերը օգուտ են քաղում օրէնքից և արգելում են երկրագործին հաւաքել ցանածը։ Համայնքների ժողովը համաձայնեց Բլեններգասսետի առաջարկութեան հետ և փոխեց այն օրէնքը, որ կալուածատէրերին տալիս էր յիշեալ արտօնութիւնը։

Չը նայելով, որ ընդդիմադրական կուսակցութիւնը խստութեամբ յարձակվում է Գլադստօնի կալուածական նոր օրինագծի վրա, այնու ամենայնիւ նրա մի քանի մասերը բոլոր կուսակցութիւնների հաւանութիւն են ստանում։ Օրինակի համար օրինագծի այն մասը, որ առաջարկում է պետական օգնութիւն հասցնել երկրագործներին հողեր գնելու համար, երևի կընդունվի մեծ կալուածներ ունեցող պարլամենտի անդամներից, որոնք ընդդէմ են օրինագծի ամբողջութեանը։

Անգլիական պահպանողականները դեռ ևս չեն կարողացել մշակել իրանց գործունէութեան նախագիծը կալուածական վերանորոգութիւնների վերաբերութեամբ։ Այդ կուսակցութեան անդամներից մէկը առաջարկել է մերժել Գլադստօնի օրինագիծը, ցոյց տալով, որ երկրագործական պայմանները վերանորոգելու փոխարէն անհրաժեշտ է զարգացնել Իռլանդիայի մէջ արդիւնաբերութիւնը և առևտուրը։ Այդպիսով իռլանդացիներին խորհուրդ են տալիս թողնել երկրագործութիւնը և պարապել առևտրով և արդիւնաբերութեամբ։ Այդ օտարոտի առաջարկութիւնը մինչև անգամ պահպանողականների շրջանում աջողութիւն չունեցաւ, բայց դա ապացուցանում է տօրիների անկումը, որոնք քննեցին այդ հարցը իրանց ժողովի մէջ։ Նրանցից ոչ ոք ուշադրութիւն չը դարձրեց այն իրողութեան վրա, որ Իռլանդիայի արդիւնաբերութեան գլխաւոր բաժինը դարերի ընթացքում երկրագործութիւնն է եղել և նոր պարապմունքների հնարքը հինը բարելաւելու փոխարէն գործնական միտք չունեցող խորամանկութիւն կը լինէր։ Երկրագործ իռլանդացիներին առևտրական դարձնելու միտքը ծաղրալի է և քաղաքական նշանակութիւն չէ կարող ունենալ։ Այսպիսով երևում է, որ պահպանողականները չունեն մի նախագիծ, որով կարողանան ընդդիմադրել Գլադստօնի առաջարկութեանը։ Պարլամենտի իռլանդական պատգամաւորները նորերումս յայտնեցին, որ նրանք կընդդիմանան Գլադստօնի օրինագծին այն պատճառով, որ այժմ Իռլանդիայի մէջ վարչական խիստ միջոցներ են գործ դնում։ Այդ հանգամանքը յոյս տուեց պահպանողականներին, որ նրանք կարող են աջողութեամբ ընդդիմադրել Գլադստօնին, բայց այս վերջինը նորերումս յայտնել է, որ նա պատրաստ է վարչական խիստ միջոցների չը դիմել, եթէ նրանք աւելորդ կը լինեն և անյարմար կալուածական վերանորոգութիւնը աջողեցնելու համար։

Լօնդօնից „Polit. Corresp.“ լրագրին հաղորդում են, որ անգլիական կառավարութիւնը դեռ ևս չէ նշանակել անգլիական դեսպան ռուսաց կառավարութեան մօտ լօրդ Դեօֆերինի տեղ և այդ հանգամանքը մինիստրութեանը բաւական հոգսեր է պատճառում։ Մի ժամանակ կառավարութիւնը կամենում էր Հէնրի Լայարդին դեսպան նշանակել, բայց դրան արգելք եղաւ այն հանգամանքը, որ Լայարդ Կ. Պօլիս եղած ժամանակ բարեկամաբար չէր վերաբերվում ռուսաց քաղաքականութեանը և այդ իրողութիւնը կարող է արգելել նրան անգլիական կառավարութեան ցանկացած դիրքը ունենալ Ս. Պետերբուրգի մէջ։ Պատմում են, որ Լայարդ կը փոխարինէ անգլիական դեսպանին Վաշինգտօնի մէջ, իսկ այս վերջինը Ռուսաստան կը գայ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պօլսի հայոց պատրիարքը մասնաժողով է նշանակել Գալֆայեան ընտանիքի ունեցած իրաւունքը Կիպրոս կղզու վրա և նրա հետ կապված Լուսինեան իշխանների տիտղոս կրելու իրաւունքը քննելու համար։ Այդ ընտանիքի գլուխը, հայոց արքեպիսկոպոս Խորէնը, հաստատում է, որ ինքը Գվիդօ-Լուսինեանների ցեղից է, որ XIV դարում թագադրված էր։ Բայց ինչպէս յայտնի է, նոյն յաւակնութիւնը մի ժամանակ յայտնել էր և ֆրանսիացի Շարլ-Սիմօն Բօւ, իշխան Լուսինեան, որ իր տոհմը համարում էր Պուատուի Լուսինեաններից ծագած։ Այժմ դրա որդին, Շարլ-Լուդվիգ-Անտօն Բօւ, իմանալով որ Կ. Պօլսում մի մասնաժողով է կազմվել Լուսինեան իշխանների իրաւունքները պարզելու համար, տեղեկացնում է մասնաժողովին որ իր հօրից ժառանգած դօկումէնտների զօրութեամբ նա միայն իրաւունք ունի այդ վիճելի տիտղոսի վրա։ Հայոց պատրիարքը, ինչպէս երևում է, աւելի հակումն է ցոյց տալիս դէպի Գալֆայեանների ընտանիքը, թէպէտ երկու կողմերն էլ իզուր են այդքան տաքանում։ Բ. Դուռը պատրիարքի վճիռը հազիւ թէ օրինաւոր համարի։ Այդ վճիռը այժմ կարող է աւելի էլ կարևոր նշանակութիւն ստանալ, քանի որ ահագին գանձեր գտնվեցան Կիպրոս կղզու վրա, որոնք յանձնված են Նիկօմիդիայի արքեպիսկոպոսին։ Ժամանակով ճանաչված իշխան Լուսինեանները, ի հարկէ, կարող կը լինեն յետ պահանջել այդ գանձը։

⁂

Աւստրիայի թագաժառանգ իշխան Ռուդօլֆի հարսնացու իշխանուհի Ստեֆանիա Վիէննա քաղաքը մտնելու օրվայ համար հարուստ բարօն Ռոտշիլդ պատուիրել է ծաղիկներ 60,000 ֆլօրին գումարի, իր պալատի դուռը զարդարելու նպատակով։

⁂

Լօրդ Դէնման, եռանդոտ հովանաւոր ամեն տեսակ անասունների, ունի մի կարճատես ձի և ամեն կերպ աշխատում է ձիու այդ ֆիզիկական պակասութեան դէմ միջոցներ գտնելու։ Այժմ պատւելի լօրդը ամեն օր զբօսնում է Լօնդօնի փողոցներում հեծած այդ կարճատես և ակնոցներով զինված ձիու վրա։ Ուրեմն կարելի է յուսալ որ ժամանակով ակնոցների միջոցով կիսակոյր ձիաներն էլ կարող կը լինեն ծառայել մարդկութեանը։ Գուցէ շատ ժամանակ չի անցնի, աւելացնում է մի լրագիր, մենք կը տեսնենք ձիավարժութեան հանդէսներում ձիաներին որոնք իրանց տէրերի պէս պէնսնէով և մօնօկլով զինված կը լինեն։

⁂

Ֆրանսիացի յայտնի ակադէմիկոս և հեղինակ Լըգուվէ, այս օրերս պատահմամբ մի մանուկի կնքահայր եղաւ ֆրանսիական մի գաւառական քաղաքում։ Գրագիրը կնքահօր անունը մատեանի մէջ արձանագրելու ժամանակ դիմեց Լըգուվէին, սովորական հարցերը նրան առաջարկելով.—Ձեր ազգանունը։—Լըգուվէ.—Ձեր կոչումը։—Գրող։—Ձեր ապրուստի միջոցները։—Գրիչ։—Եւ այդ հարցմունքները վերջացնելուց յետոյ, գրագիրը հետևեալը նշանակեց վկայական թղթի մէջ. «Կնքահայր պ. Լըգուվէ, տպարանատէր և գրիչների ֆաբրիկանտ, փարիզցի»

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 5 մայիսի։ „Правит. Вѣст.“ լրագրի մէջ տպված է հետևեալ հրամանը. կոմս Լօրիս-Մելիքօվ իր խնդիրքի համեմատ հիւանդութեան պատճառով արձակված է ներքին գործերի մինիստրի պաշտօնից, մնալով պետական խորհրդի անդամ։ Կոմս Իգնատիևին հրամայած է վարել ներքին գործերի մինիստրի պաշտօնը։ Երէկ դատաստանական պալատը հաստատեց նահանգական դատարանի վճիռը Կաշևարովա-Ռուդնէվայի մասին Պօլիկարպօվի և Բուրենինի վերաբերութեամբ։ Վճռված է Բուրենինին բանտարկել մի ամսով և 200 ր. տուգանքի ենթարկել, Ֆէօդօրովին բանտարկել երեք շաբաթ ժամանակով և 400 ր. տուգանքի ենթարկել։

ՕԴԷՍՍԱ, 3 մայիսի։ Հարաւում մի քանի տեղեր քրիստոնեաների և հրէաների կռիւներ պատահեցան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մայիսի։ ,,Сенатскія Вѣд.‘‘ լրագրի աւելուածի մէջ տպված է հրաման ստատս-սեկրետար Օստրովսկուն վարել պետական կայքերի մինիստրի պաշտօնը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մայիսի։ Պետական բանկի $5^0/_0$ տոմսակը առաջին շրջանի արժէ 97 ր. 25 կ., երկրորդ 94 ր. 25 կ., երրորդ 94 ր. 50½ կ., չորրորդ 94 ր. 50 կ., ներքին $5^0/_0$ առաջին փոխառութեան տոմսակը արժէ 223 ր. 75 կ., երկրորդ 216 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 87½ կ., երկրորդ 93 ր., ոսկի 8 ր. 2½ կ.։ Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 24,37 պէնս, Ամստերդամի վրա 208 պէնս, ռուսաց 100 ր. Փարիզի վրա արժէ 257 ֆրանկ։ Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ